ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՉԻՊ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/388 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
1	Synology; Seagate	Synology; Seagate	1. Սարքի ընդհանուր պահանջներ • Ցանցային տվյալների պահպանման սարք՝ աշխատասեղանային կատարմամբ, նախատեսված շուրջօրյա շահագործման համար։ • Սարքը պետք է ապահովի տվյալների պահպանում, ընդհանուր հասանելիություն, պահուստավորում և տվյալների պաշտպանության գործառույթներ։ 2. Ներքին կրիչների տեղադրման հնարավորություններ • Առնվազն 4 հիմնական կրիչների տեղադրման բնիկ։ • Հիմնական բնիկները պետք է ապահովեն 3.5 դյույմանոց SATA կոշտ սկավառակների և 2.5 դյույմանոց SATA պինդմարմնային կրիչների օգտագործումը։ • Պետք է ապահովվի հիմնական կրիչների փոխարինման հնարավորությունը՝ առանց սարքի աշխատանքը դադարեցնելու։ • Սարքը պետք է ունենա առնվազն 2 ներկառուցված M.2 2280 NVMe բնիկ՝ հետագայում պինդմարմնային կրիչների տեղադրման և օգտագործման համար։ • Լրացուցիչ պինդմարմնային կրիչները կարող են օգտագործվել տվյալների միջանկյալ արագագործ պահպանման և (կամ) առանձին պահեստավորման տարածքի ստեղծման նպատակով։ 3.

			Պրոցեսոր • 64-բիթանոց պրոցեսոր՝ առնվազն 4 հաշվարկային միջուկով և 8 հոսքով, նվազագույնը 2.2 ԳՀց աշխատանքային հաճախականությամբ։ • Տվյալների գաղտնագրման ապարատային արագացման աջակցություն։ 4. Օպերատիվ հիշողություն • Առնվազն 4 ԳԲ DDR4 ECC SODIMM տեսակի օպերատիվ հիշողություն՝ սխալների հայտնաբերման և ուղղման հնարավորությամբ։ • Առնվազն 2 հիշողության բնիկ։ • Օպերատիվ հիշողության ընդլայնման հնարավորություն՝ առնվազն մինչև 32 ԳԲ։ 5. Տվյալների պահպանման և սկավառակային զանգվածների կառավարում • Պետք է աջակցվեն առնվազն RAID 0, RAID 1, RAID 5, RAID 6, RAID 10, JBOD և մեկ կրիչի առանձին օգտագործման ռեժիմները։ • Ներքին կրիչների համար պետք է աջակցվի Btrfs և ext4 ֆայլային համակարգերի օգտագործումը։ 6. Ցանցային միացման հնարավորություններ • Առնվազն 2 հատ 2.5 Գբիթ/վ արագությամբ RJ-45 ցանցային միացման բնիկ։ • Ցանցային կապուղիների համակցման և (կամ) ցանցային կապի պահուստավորման հնարավորություն։ 7. Արտաքին միացումներ և ընդլայնման հնարավորություններ • Առնվազն 2 հատ USB 3.x միացման բնիկ։ • Արտաքին ընդլայնման սարքի միացման հնարավորություն։ • Ընդլայնման սարքի միացման դեպքում կրիչների ընդհանուր քանակը պետք է հնարավոր լինի ավելացնել առնվազն մինչև 9 հատ։ 8. Ցանցային ծառայություններ և հաղորդակցման արձանագրություններ • Պետք է աջակցվեն SMB/CIFS, NFS, FTP, WebDAV, Rsync, iSCSI և HTTPS ծառայություններն ու հաղորդակցման արձանագրությունները։ • Պետք է ապահովվի օգտվողների և օգտվողների խմբերի կառավարում, հասանելիության իրավունքների տարանջատում, ինչպես նաև Windows համակարգի հասանելիության վերահսկման ցուցակների (ACL) աջակցություն։ • Պետք է աջակցվի LDAP կամ համարժեք կենտրոնացված օգտվողների գրացուցակի հետ ինտեգրման հնարավորությունը։ 9. Տվյալների պաշտպանություն և պահուստավորում • Պետք է ապահովվեն տվյալների պահուստային պատճենների ստեղծման և վերականգնման

				գործառույթներ։ • Պետք է աջակցվի տվյալների վիճակի ակնթարթային պատճենների ստեղծման, ինչպես նաև դրանց կրկնօրինակման և վերարտադրման հնարավորությունը։ • Պետք է ապահովվի պահուստային պատճենների ամբողջականության ստուգման հնարավորություն։ 10. Տեղեկատվական անվտանգություն • Պետք է աջակցվեն HTTPS, SFTP և SSH անվտանգ հաղորդակցման արձանագրությունները։ • Պետք է ապահովվի ընդհանուր օգտագործման պանակների և ցանցով փոխանցվող տվյալների գաղտնագրման հնարավորություն, այդ թվում՝ SMB արձանագրությամբ տվյալների գաղտնագրված փոխանցում։ • Պետք է առկա լինի ցանցային պաշտպանության և մուտքային ու ելքային կապերի վերահսկման համակարգ։ • Պետք է ապահովվի անհաջող կամ կասկածելի մուտքի փորձերի սահմանափակման և արգելափակման հնարավորություն։ 11. Արտադրողականություն • Տվյալների հաջորդական ընթերցման արագությունը պետք է կազմի առնվազն 500 ՄԲ/վ։ • Տվյալների հաջորդական գրառման արագությունը պետք է կազմի առնվազն 500 ՄԲ/վ։ • Նշված արագությունները պետք է համապատասխանեն արտադրողի կողմից սահմանված և հրապարակված փորձարկման մեթոդաբանության արդյունքներին։ 12. Էլեկտրամատակարարում և հովացում • Մուտքային սնուցման լարում՝ 100–240 Վ փոփոխական հոսանք, 50/60 Հց հաճախականությամբ, միաֆազ։ • Ակտիվ հովացման համակարգ՝ առնվազն երկու օդափոխիչով։ 13. Շահագործման պայմաններ • Աշխատանքային ջերմաստիճան՝ 0°C-ից մինչև +40°C։ • Աշխատանքային հարաբերական խոնավություն՝ 8–80%։ 14. Մատակարարման կազմում ներառվող հիմնական կրիչներ • Սարքի հետ միասին պետք է մատակարարվեն 4 (չորս) հատ կոշտ սկավառակ՝ յուրաքանչյուրը առնվազն 4 ՏԲ տարողությամբ։ • Յուրաքանչյուր կոշտ սկավառակ պետք է ունենա 3.5 դյույմանոց ձևաչափ, SATA միացման միջերես՝ առնվազն 6 Գբիթ/վ տվյալների փոխանցման արագությամբ։ • Կոշտ սկավառակները պետք է օգտագործեն սովորական մագնիսական գրանցման (CMR) տեխնոլոգիա և

			նախատեսված լինեն ցանցային տվյալների պահպանման համակարգերում շուրջօրյա շահագործման համար։ • Թույլատրելի տարեկան աշխատանքային ծանրաբեռնվածությունը պետք է կազմի առնվազն 180 ՏԲ։ • Կրիչները պետք է նախատեսված լինեն RAID սկավառակային զանգվածներում շահագործման համար և համատեղելի լինեն առաջարկվող տվյալների պահպանման սարքի հետ։ • Բոլոր չորս կոշտ սկավառակները պետք է ունենան նույն անվանական տարողությունը և համադրելի տեխնիկական դասը։ • Տվյալների պահպանման ընդհանուր անվանական տարողությունը՝ 16 ՏԲ՝ մինչև սկավառակային զանգվածի կազմավորումը։ 15. Երաշխիք և մատակարարման ամբողջականություն • Ցանցային տվյալների պահպանման հիմնական սարքի երաշխիքային սպասարկման ժամկետը պետք է կազմի առնվազն 3 տարի։ • Մատակարարման կազմում պետք է ներառվեն՝ o Ցանցային տվյալների պահպանման հիմնական սարքը։ o Էլեկտրասնուցման ադապտերը և համապատասխան մալուխը։ o Տեղադրման և միացման համար անհրաժեշտ պարագաները։ o 4 (չորս) հատ կոշտ սկավառակ՝ յուրաքանչյուրը 4 ՏԲ տարողությամբ։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЧИП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁՐ-26/388 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	товарный знак	технические характеристики
1			